

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20 դեկտեմբերի 2013թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա. Բախշյանը, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2013թ. ՀՀ Սյունիքի մարզում իրականացված աշնան գյուղատնտեսական աշխատանքների, 2012թ. աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի և 2013թ. աշնանը հատկացված պարարտանյութի գումարների հավաքագրման արդյունքների մասին

**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/**

2. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների և արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների մասին

**/ Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյան/**

3. Մարզի համայնքներում 2013թ. իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերությունների, դրանց վերացմանն ուղղված միջոցառումների և խնդիրների մասին

**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյան/**

4. ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների, արձանագրված թերությունների և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների ընթացքի մասին

**/Ջեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ն. Ավանեսյան/**

Նախքան օրակարգի հարցերին անցնելը, աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գ. Թադևոսյանի կողմից ներկայացվեց տեղեկատվություն նախորդ մարզխորհրդի նիստի ընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:

Օրակարգի առաջին հարցի՝ «2013թ. ՀՀ Սյունիքի մարզում իրականացված աշնան գյուղատնտեսական աշխատանքների, 2012թ. աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի և 2013թ. աշնանը հատկացված պարարտանյութի գումարների հավաքագրման արդյունքների մասին» զեկուցումով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երկրորդ՝ «ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների և արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մուշեղ Կոստանդյանը:

Օրակարգի երրորդ՝ «Մարզի համայնքներում 2013թ. իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերությունների, դրանց վերացմանն ուղղված միջոցառումների և խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:

Օրակարգի չորրորդ՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների, արձանագրված թերությունների և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների ընթացքի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Նահրա Ավանեսյանը:

Օրակարգում ներառված հարցերի շուրջ՝ համայնքներում առկա խնդիրների մասին ելույթներով և հարցադրումներով հանդես եկան Սյունիքի, Տեղի, Ն. Խնձորեսկի, Գորիսի, Շաքիի, Ծավի, Որոտանի, Բռնակոթի համայնքների ղեկավարները:

Բարձրացված հարցադրումներին տրվեցին պարզաբանումներ զեկուցողների և մարզպետի կողմից:

Հանձնարարվեց աշխատակազմի՝

- գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանին՝
  - ամփոփել 2012թ. աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի, 2013թ. աշնանը հատկացված պարարտանյութի և դիզ.վառելիքի դիմաց գումարների հավաքագրման վերաբերյալ համայնքների ղեկավարների առաջարկությունները և մշակել կոնկրետ գործողությունների ծրագիր գումարների հավաքագրման գործընթացն ամբողջությամբ ավարտելու ուղղությամբ.
- ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյանին, հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյանին, իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանովին.
  - մշակել ժամանակացույց՝ համայնքների ղեկավարների հետ համաձայնեցված ֆորմատով (սեմինարներ, խորհրդատվական ծառայություն և այլն) տեղական ինքնակառավարման մարմիններին անհրաժեշտ իրավական աջակցություն

ապահովելու, առանձին ոլորտներին առնչվող փաստաթղթերի որակի և պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ:

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի, ինչպես նաև համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի և առաջնահերթ անելիքների մասին ելույթով հանդես եկավ ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ Ա. Բախշյանը:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

Կատ. Ս. Սահակյան  
Հեռ. (0285) 2-63-55